ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Սուրբ Սծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, դեկտեմբերի 8—11 օրերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հյուր եղավ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը:

Վրաց Պատրիարք-Կաթողիկոսին ուղեկցում էին գերաշնորհ Տ. Դավիթ արքեպիսկոպոսը, Վրաստանի ռուսաց առաջնորդ գերաշնորհ Տ. Զինովի եպիսկոպոսը, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Թբիլիսիի վրաց Ս. Սիոն Մայր եկեղեցու ավագերեց, արժանապատիվ Տ. Ալեքսանդր քահանան և Վրաստանի հայոց թեմական խորհրդի անդամ պր. Սուրեն Ավշյանը:

Հայաստանում գտնված ժամանակամիջոցում հյուրերը դիտեցին Երևանի և Էջմիածնի տեսարժան վայրերը, այցելեցին Ս. Գեղարդի վանքը, ծանոթացան Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի կյանքին:

Կիրակի, դեկտեմբերի 10-ին, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ: Ապա եղավ ընդունելություն Վեհարանում: Այնուհետև, ի պատիվ հյուրերի, Ճեմարանի դահլիճում տրվեց ճաշկերույթ:

Վեհարանում Վազգեն Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Եփրեմ Բ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը, ջերմ և սրտագին մթնոլորտում, մտքերի փոխանակություն ունեցան եկեղեցական հարցերի շուրջ և մի անգամ ևս ընդգծեցին աշխարհի խաղաղության ամրապնդման գործում քրիստոնեական եկեղեցիների գործուն մասնակցության անհրաժեշտությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

16 դեկտեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ